

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
փակ բաժնետիրական ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններ

*2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն.....	5
2. Գործարար միջավայր	5
3. Պատրաստման հիմունքներ	5
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր.....	6
5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ	16
6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	16
7. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16
8. Վաճառքի համար մատչելի ներդրումներ.....	17
9. Հիմնական միջոցներ	17
10. Հարկում	18
11. Այլ ակտիվներ.....	19
12. Այլ պարտավորություններ	19
13. Սեփական կապիտալ.....	19
14. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ.....	19
15. Անձնակազմի գծով ծախսեր.....	20
16. Վարչական և այլ ծախսեր	20
17. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	20
18. Գործարքներ կապակցված կողմերի հետ	21
19. Ֆինանսական գործիքների իրական արժեք	22
20. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն	24
21. Ռիսկերի կառավարում.....	25
22. Կապիտալի համարժեքություն	27

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՄԵՆԹ» ՓԲ Ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՄԵՆԹ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի կանոնագրքի* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Ընկերության՝ 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2017թ. ապրիլի 13-ին չձևափոխված կարծիք է արտահայտել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևավորվել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝
Գլխավոր տնօրեն՝ Լ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի
հիման վրա)



Էրիկ Հայրապետյան

13 ապրիլի, 2018թ.




**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**


(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2017	2016
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	110,457	44,038
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7	106,045	50,101
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	8	606,121	492,478
Հիմնական միջոցներ	9	28,314	31,590
Հետաձգված հարկային ակտիվներ	10	2,038	27,923
Այլ ակտիվներ	11	80,337	58,764
		933,312	704,894
Ընդամենը ակտիվներ			
Պարտավորություններ			
Ընթացիկ հարկային պարտավորություն		12,168	-
Այլ պարտավորություններ	12	38,687	26,637
		50,855	26,637
Ընդամենը պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	13	800,000	800,000
Վաճառքի համար մատչելի ներդրումների վերազնահատման պահուստ		123,489	77,478
Կուտակված վնաս		(41,032)	(199,221)
		882,457	678,257
Ընդամենը սեփական կապիտալ			
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		933,312	704,894

Ստորագրված է և լիազորված է թողարկման ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2018թ. ապրիլի 13-ին:


 Ժան Մազեջյան
 Գործադիր տնօրեն




 Վահան Արրահամյան
 Գլխավոր հաշվապահ

5-ից 27 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>Ծան.</i>	<i>2017</i>	<i>2016</i>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	14	569,730	357,488
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		9,707	11,632
Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթով գործառնություններից		1,445	(1,072)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		17,631	-
Անձնակազմի գծով ծախսեր	15	(79,064)	(140,929)
Վարչական և այլ ծախսեր	16	(323,207)	(244,679)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		<u>196,242</u>	<u>(17,560)</u>
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	10	(38,053)	27,923
Տարվա շահույթ		<u>158,189</u>	<u>10,363</u>
Այլ համապարփակ եկամուտ			
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ</i>			
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից չիրացված օգուտ		63,642	59,616
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից իրացված օգուտ՝ վերադասակարգված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		(17,631)	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		<u>46,011</u>	<u>59,616</u>
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		<u>204,200</u>	<u>69,979</u>

5-ից 27 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ/ (վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	800,000	17,862	(209,584)	608,278
Տարվա շահույթ	–	–	10,363	10,363
Այլ համապարփակ եկամուտ	–	59,616	–	59,616
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	–	59,616	10,363	69,979
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	800,000	77,478	(199,221)	678,257
Տարվա շահույթ	–	–	158,189	158,189
Այլ համապարփակ եկամուտ	–	46,011	–	46,011
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	–	46,011	158,189	204,200
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	800,000	123,489	(41,032)	882,457

5-ից 27 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>Ծան.</i>	<i>2017</i>	<i>2016</i>
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		196,242	(17,560)
<i>Եզրտումներ</i>			
Մաշվածություն	16	5,824	11,980
Ստացվելիք տոկոսներ		(1,042)	(89)
Արտարժույթի փոխանակման տարբերություններից զուտ (օգուտ)/վնաս		(2,476)	196
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		(17,631)	-
Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		180,917	(5,473)
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում Այլ ակտիվներ		(19,717)	(16,893)
Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/ (նվազում)		11,525	14,438
Այլ պարտավորություններ			
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված/(օգտագործված) գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը		172,725	(7,928)
Վճարված շահութահարկ		-	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված/(օգտագործված) գործառնական գործունեությունից		172,725	(7,928)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Բանկերում տեղաբաշխված ավանդներ		(455,024)	(363,506)
Բանկերում տեղաբաշխված ավանդների մարում		400,236	464,929
Վաճառքի համար մատչելի ներդրումների ձեռքբերում		(130,001)	(145,000)
Վաճառքի համար մատչելի ներդրումների վաճառք և մարում		80,000	-
Հիմնական միջոցների ձեռքբերում	9	(2,548)	(719)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում		(107,337)	(44,296)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		65,388	(52,224)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	6	44,038	95,956
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,031	306
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	6	110,457	44,038

5-ից 27 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1. Հիմնական գործունեության նկարագրություն

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՄԵՆԹ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2013 թվականին և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությամբ: Ընկերությունը գրանցվել է 2013 թվականի նոյեմբերի 19-ին՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից թիվ 2 արտոնագրային համարով:

Ընկերության հիմնական գործունեությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթները ուժի մեջ են մտել 2014 թվականի հունվարի 1-ից, հետևաբար Ընկերության հիմնական գործունեությունը մեկնարկել է 2014 թվականի հունվարի 1-ից: Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակում Ընկերության կառավարման ներքո գտնվում են հետևյալ երեք տեսակների ֆոնդերը.

- ▶ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՄԵՆԹ» ՓԲԸ կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ,
- ▶ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՄԵՆԹ» ՓԲԸ պահպանողական կենսաթոշակային ֆոնդ,
- ▶ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՄԵՆԹ» ՓԲԸ հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ:

Ընկերության գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10 շենք, թիվ 100-101 տարածք:

2. Գործարար միջավայր

ՀՀ-ում շարունակվում են տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում ներկայիս իրավիճակում Ընկերության գործունեության կայունությունը ապահովելու համար:

3. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից, և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից:

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնք իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

3. **Պատրաստման հիմունքներ (շարունակություն)**

Գործառնական և ներկայացման արդյունք

Ընկերության գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, որը ՀՀ սահմաններից դուրս ազատ փոխարկելի չէ:

Վերադասակարգումներ

2017 թվականի ներկայացմանը համապատասխանեցնելու նպատակով 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում կատարվել են հետևյալ վերադասակարգումները.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	Համաձայն նախորդ հաշվետվության	Վերադասակարգում	Ճշգրտված
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
<i>Գործառնական ակտիվների գուտ (ավելացում)/նվազում</i>			
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	101,423	(101,423)	–
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(145,000)	145,000	–
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Բանկերում տեղաբաշխված ավանդներ	–	(363,506)	(363,506)
Բանկերում տեղաբաշխված ավանդների մարում	–	464,929	464,929
Վաճառքի համար մատչելի ներդրումների ձեռքբերում	–	(145,000)	(145,000)

4. **Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր**

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Ընկերությունը առաջին անգամ կիրառել է ստանդարտներում որոշ փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը դեռ ուժի մեջ չի մտել: Յուրաքանչյուր փոփոխության բնույթն ու ազդեցությունը նկարագրվում է ստորև.

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում՝ «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն». բացահայտման նախաձեռնություն

Ըստ նոր պահանջների՝ ընկերությունները պետք է բացահայտեն տեղեկատվություն ֆինանսավորման գործունեության հետևանքով իրենց ֆինանսական պարտավորությունների փոփոխությունների վերաբերյալ, ներառյալ փոփոխությունները ինչպես դրամական հոսքերից, այնպես էլ ոչ դրամական հոգվածներից (օր.՝ փոխարժեքային տարբերությունից օգուտներն ու վնասները): Ընկերությունը չի վարել որևէ ֆինանսավորման գործունեություն ներկա և համեմատական ժամանակաշրջանների ընթացքում:

4. **Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)**

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում՝ «Շահութահարկ» չիրացված կորուստների գծով հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Փոփոխությունները հստակեցնում են, որ ընկերությունը պետք է հաշվի առնի, թե արդյոք հարկային օրենսդրությունը սահմանափակում է հարկվող շահույթի աղբյուրները, որոնց նկատմամբ այն կարող է նվազեցումներ կատարել չիրացված կորուստներին վերաբերող նվազեցվող ժամանակավոր տարբերությունները վերականգնելիս: Ավելին, փոփոխությունները տրամադրում են ուղեցույց, թե ինչպես ընկերությունը պետք է որոշի ապագա հարկվող շահույթը, և բացատրում այն հանգամանքները, երբ հարկվող շահույթը կարող է ներառել որոշ ակտիվների վերադարձը իրենց հաշվեկշռային արժեքից ավելի մեծ արժեքով: Փոփոխությունների կիրառումը չի ազդում Ընկերության ֆինանսական վիճակի և արդյունքների վրա, քանի որ Ընկերությունը չունի նվազեցվող ժամանակավոր տարբերություններ կամ ակտիվներ, որոնք գտնվում են փոփոխությունների շրջանակում:

Ֆոնդերի կառավարում

Ընկերությունը ներդրողների անունից կառավարում է ներդրումային ֆոնդերում պահվող ակտիվները: Այս կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառված չեն Ընկերության այս ֆինանսական հաշվետվություններում, քանի որ Ընկերությունը հանդես է գալիս որպես ներդրողների գործակալ ֆոնդերում:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից, և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտ և ծախս

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Ֆոնդերի կառավարման վճարներ

Ֆոնդերի կառավարումից ստացվող հասույթը ճանաչվում է որպես վաստակած, հիմք ընդունելով հասույթի այն գումարը, որն Ընկերությունն իրավասու է ստանալ ժամանակաշրջանի համար: Ֆոնդերի կառավարման վճարները հաշվարկվում են կառավարվող ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ կիրառվող վճարների պայմանագրային դրույթների հիման վրա:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

Վճարները, կոմիսիոն և այլ եկամուտներն ու ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում:

4. **Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)**

Արտարժույթի վերահաշվարկ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	<i>2017թ. դեկտեմբերի 31</i>	<i>2016թ. դեկտեմբերի 31</i>
ՀՀ դրամ / 1 Եվրո	580.10	512.20

Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնականությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված շահութահարկը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույքի չիմաստական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չիանդիսացող գործառնականություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, երբ առաջացման պահին դրանք չեն ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև գործառնական տարբեր հարկեր, որոնք համապատասխանում են Ընկերության գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսեր հոդվածում:

4. **Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են ՀՀ առևտրային բանկերում հաշիվների մնացորդներից և կարճաժամկետ ժամկետային ավանդներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռքբերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ ոչ ձեռքբերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով, գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրում չէ, գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների, ներառյալ՝ առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերությունը ֆինանսական ակտիվները դասակարգում է՝ ըստ հետևյալ խմբերի.

- ▶ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- ▶ դեբիտորական պարտքեր,
- ▶ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ ղեկավարության կողմից սահմանված ուղեցույցների հիման վրա: Սկզբնական ճանաչումից հետո յուրաքանչյուր հաշվետու տարում անհրաժեշտության և հնարավորության դեպքում Ընկերությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվները:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս խումբն ունի երկու ենթախումբ. առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ և որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական ակտիվներ: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս խմբում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով, կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից ակտիվի ձեռքբերման պահին:

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք առաջանում են, երբ Ընկերությունը դրամ է տրամադրում անմիջապես պարտապանին՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

4. **Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)**

Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները պարտքային և կապիտալի գործիքներում կատարված ներդրումներ են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել գործառնական, իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ կապիտալի գործիքներում գների փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով, ընդ որում օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև ներդրումների օտարումը կամ արժեզրկումը, որի ընթացքում նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթ կամ վնասը վերադասակարգվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են այն ժամանակ, երբ Ընկերությունը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Կարգավորվող ֆինանսական շուկաներում ակտիվորեն վաճառվող ֆինանսական ակտիվի իրական արժեքը որոշվում է հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գների միջոցով: Ակտիվ շուկա չունեցող գործիքների իրական արժեքը որոշվում է գնահատման մոդելների միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելը:

Անորոշագույն արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում են արժեզրկված և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների (ծախսային իրադարձություն) արդյունք, և այդ իրադարձությունը (կամ իրադարձությունները) ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել պարտապանի զգալի ֆինանսական դժվարությունները, պարտավորությունների վճարման խախտումները, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, և դիտարկվող շուկաներից տեղեկատվություն՝ ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կապված են դեֆոլտների հետ:

Ընկերությունն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշերն անհատապես՝ էական ֆինանսական ակտիվների համար, և անհատապես կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե որոշվում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն հանգամանքից, էական է այն, թե՛ ոչ, այդ ակտիվը ներառվում է համանման ռիսկերի բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում, և դրանց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով, և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից վնասներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի տարբերությունը: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով: Արժեզրկումից ծախսն արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից վնաս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Ընկերությունը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների ապագա հոսքերի ներկա արժեքի հաշվարկը հիմնվում է այն դրամական հոսքերի վրա, որոնք կարող են ստացվել գրավի իրացումից, նվազեցված գրավի բռնագանձման և օտարման ծախսումներով՝ անկախ բռնագանձման հավանականությունից:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ▶ ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- ▶ Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև,
- ▶ Ընկերությունը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը հաշվառվում է ակտիվում Ընկերության շարունակվող մասնակցության սահմաններում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքից և Ընկերությունից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումարից նվազագույնով:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Ընկերության մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Ընկերությունը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է փոխանցված ակտիվի իրական արժեքի և օպցիոնի իրագործման գնի նվազագույնը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Նույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ երբ կատարվում է գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն, հանգեցնում է հին պարտավորության ապաճանաչմանը և նոր պարտավորության ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վարձակալություն

Գործառնական – Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են այլ գործառնական ծախսերում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: 2017 թվականի ընթացքում օգտակար ծառայության ժամկետները փոխվել են: Մաշվածության հետևյալ դրույքաչափերն են կիրառվել ընթացիկ ժամանակահատվածում.

	<i>2017թ. ապրիլի 1-ից հետո</i>	<i>2017թ. ապրիլի 1-ից առաջ</i>
	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)
Համակարգիչներ	5.0	1.0
Տրանսպորտային միջոցներ	5.0	3.3
Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	13.3	13.3
Այլ հիմնական միջոցներ	5.0	3.3

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համապարփակ ֆինանսական հաշվետվություններում:

**4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր
(շարունակություն)**

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և համապարփակ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Եկանուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների կամ համանման գործարքների խմբից առաջացող օգուտների և վնասների համար, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեությունից:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությունը ճանաչում է կապակցված կողմերի գործարքները, որոնց համար համապատասխան ստանդարտները չեն պահանջում սկզբնական ճանաչում իրական արժեքով, գործարքի պայմանագրերում նշված փաստացի գներով:

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Ընկերության ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014 թ. հուլիսին ՀՀՄՍԻ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 39 ստանդարտին՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, ինչպես նաև արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Բացի հեջավորման հաշվառումից, հետադարձ կիրառումը պահանջվում է, սակայն համադրելի տեղեկատվության վերահաշվարկը պարտադիր չէ:

Ընկերությունը գտնվում է ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը գնահատելու գործընթացում, սակայն այդ ազդեցության որևէ ողջամիտ գնահատում դեռևս առկա չէ:

(ա) Դասակարգում և չափում

ՖՀՄՍ 9-ի համաձայն, բոլոր պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում «բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման» չափանիշին (SPPI), սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Այս չափանիշի համաձայն՝ պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում «վարկավորման հիմնական պայմաններին», ինչպիսիք են պարունակվող փոխարկման օպցիոնով գործիքները կամ առանց ռեզերսիվ իրավունքի վարկերը, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: SPPI չափանիշին համապատասխանող պարտքային ֆինանսական ակտիվների համար սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգումը որոշվում է բիզնես մոդելի հիման վրա, որի համաձայն այդ գործիքները կառավարվում են.

- ▶ գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով,
- ▶ գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու և վաճառքի նպատակով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով,
- ▶ այլ նպատակով պահվող գործիքները, ներառյալ առևտրային ֆինանսական ակտիվները, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Սկզբնական ճանաչման ժամանակ բաժնային ֆինանսական ակտիվները պետք է դասակարգվեն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշում է կայացվել, առանց հետագայում վերանայելու իրավունքի, դրանք դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող: Իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային գործիքներից ողջ իրացված և չիրացված շահույթն ու վնասը, բացառությամբ շահաբաժինների, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, առանց շահույթում կամ վնասում հետագա վերադասակարգման: Ընկերությունը նախատեսում է կառավարվող ֆոնդերում կատարված ներդրումները դասակարգել որպես իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ եկամտի միջոցով:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը հիմնականում մնում են անփոփոխ ՀՀՄՍ 39-ի պահանջների համեմատ:

բ) Արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը պահանջում է Ընկերությունից ճանաչել պահուստ անորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բոլոր պարտքային ֆինանսական ակտիվների, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և երաշխիքների գծով ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) համար: Պահուստը որոշվում է ԱՎԿ-ի հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի նշանակալի աճ: Այդ դեպքում պահուստը հիմնված է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում ԱՎԿ-ի վրա:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը հրապարակել է 2014 թ. -ի մայիսին և փոփոխվել 2016 թ. -ի ապրիլին: Այն կփոխարինի հասույթի ճանաչման ֆՀՄՍ-ների ներկայիս բոլոր պահանջներին: 2018 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար պահանջվում է լիարժեք հետընթաց կիրառություն կամ փոփոխված հետընթաց կիրառություն: Ընկերությունը նախատեսում է ընդունել նոր ստանդարտը՝ փոփոխված հետընթաց կիրառման եղանակով՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը տարեսկզբի չբաշխված շահույթում 2018 թվականի հունվարի 1-ին, առանց վերահաշվարկելու համեմատական տեղեկատվությունը:

ՖՀՄՍ 15-ը սահմանում է հինգ քայլերի մոդել՝ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ի համաձայն հասույթը պետք է ճանաչվի փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ ընկերությունն ակնկալում է ստանալ իրավունք՝ հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց: Սակայն տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և վարձակալության անբաժան մաս են կազմում, կշարունակեն գտնվել ֆՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կկարգավորվեն այլ կիրառելի ստանդարտներով (օր.՝ ֆՀՄՍ 9 և ֆՀՄՍ 16՝ «Վարձակալություն»): Ընկերությունը ներկայումս չի ակնկալում էական ազդեցություն ֆՀՄՍ 15-ի ընդունման գծով:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը թողարկվել է 2016 թ. -ի հունվարին և փոխարինում է ՀՀՄՍ 17-ին՝ «Վարձակալություն», ֆՀՄՍ 4-ին՝ «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ 15-ին՝ «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27-ին՝ «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»: ՖՀՄՍ 16-ը սահմանում է վարձակալության ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և պահանջում է վարձակալներին հաշվառել բոլոր վարձակալությունները հաշվեկշռային միասնական մոդելի հիման վրա՝ ՀՀՄՍ 17-ի ֆինանսական վարձակալության հաշվառման նման: Ստանդարտը ներառում է վարձակալության ճանաչման երկու բացառություն՝ ցածրարժեք ակտիվների վարձակալություններ և կարճաժամկետ վարձակալություններ (այսինքն, 12 ամիս կամ պակաս ժամկետով վարձակալություններ): Վարձակալության ժամկետի մեկնարկի ամսաթվի դրությամբ վարձակալը պետք է ճանաչի պարտավորություն՝ վարձակալության վճարումները կատարելու համար (այսինքն, վարձակալության պարտավորություն) և ակտիվ, որը ներկայացնում է վարձակալության ժամկետի ընթացքում ակտիվի օգտագործման իրավունքը (այսինքն, ակտիվը՝ օգտագործման իրավունքի ձևով): Վարձակալները պետք է առանձին ճանաչեն վարձակալության պարտավորության գծով տոկոսները և օգտագործման իրավունքի ձևով ակտիվի անորտիզացիայի գծով ծախսերը:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Վարձակալներից նաև կպահանջվի վերագնահատել վարձակալության գծով պարտավորությունները որոշակի իրադարձությունների տեղի ունենալու դեպքում (օրինակ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ասպագա վարձակալության վճարների փոփոխություն, որը պայմանավորված է այդ վճարումների որոշման համար օգտագործվող ինդեքսի կամ փոխարժեքի փոփոխությունով): Դեպքերի մեծ մասում վարձակալը պետք է ճանաչի վարձակալության պարտավորության վերագնահատումը՝ որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճշգրտում:

ՖՀՄՍ 16-ով վարձատուների կողմից հաշվառումը զգալիորեն չի փոխվել ներկայիս ՀՀՄՍ 17-ի համեմատ: Վարձատուները կշարունակեն դասակարգել բոլոր վարձակալությունները՝ օգտագործելով ՀՀՄՍ 17-ի դասակարգման սկզբունքները, և առանձնացնել վարձակալության երկու տեսակ՝ գործառնական և ֆինանսական վարձակալություններ:

ՖՀՄՍ 16-ը նաև պահանջում է վարձակալներին և վարձատուներին բացահայտել ավելի շատ տեղեկատվություն, քան ՀՀՄՍ 17-ը:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, բայց ոչ նախքան կազմակերպությունը կսկսի կիրառել ՖՀՄՍ 15-ը: Վարձակալը կարող է կիրառել ստանդարտը ամբողջական հետընթաց կամ փոփոխված հետընթաց մոտեցմամբ: Ստանդարտի անցումային դրույթները թույլ են տալիս որոշակի մեղմացում: 2018 թ. Ընկերությունը կշարունակի գնահատել ՖՀՄՍ 16-ի հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄԿ մեկնաբանություն 22՝ «Արտարժույթով գործարքներ և կանխավճարված փոխհատուցում»

Մեկնաբանությունը հստակեցնում է, որ ոչ դրամային ակտիվի և ոչ դրամային պարտավորության ապաճանաչման ժամանակ կանխավճարի ստացման կամ փոխանցման արդյունքում առաջացող համապատասխան ակտիվի, ծախսերի և եկամուտների (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման համար օգտագործվող սփոթ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարված փոխհատուցումից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Մեկնաբանությունը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Քանի որ Ընկերության ընթացիկ մոտեցումը համապատասխանում է մեկնաբանությանը, Ընկերությունը չի ակնկալում էական ազդեցություն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄԿ մեկնաբանություն 23՝ «Անորոշություն շահութահարկի հաշվարկման կանոնների վերաբերյալ»

Մեկնաբանությունը վերաբերում է շահութահարկի հաշվառմանը, երբ հարկի հաշվարկը պարունակում է անորոշություն, որն ազդում է ՀՀՄՍ 12-ի կիրառման վրա: Մեկնաբանությունը չի կիրառվում ՀՀՄՍ 12-ի շրջանակից դուրս հարկերի կամ հավաքագրումների վրա, ինչպես նաև չի պարունակում կոնկրետ պահանջներ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ կապված տոկոսների և տույժերի վերաբերյալ:

Կազմակերպությունը պետք է որոշի. արդյոք յուրաքանչյուր անորոշ հարկային մեկնաբանություն պետք է դիտարկել առանձին թե մեկ կամ մի քանի այլ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ միասին: Պետք է կիրառել այն մոտեցումը, որն ավելի լավ է կանխատեսում անորոշության հստակեցման արդյունքը: Մեկնաբանությունը նաև վերաբերում է հարկային մարմինների կողմից կատարված հարկային մեկնաբանությունների դիտարկումներին վերաբերող ենթադրություններին, որոնք արվում են կազմակերպության կողմից, ինչպես նաև այն հանգամանքին, թե ինչպես է կազմակերպությունը դիտարկում փաստերի և հանգամանքների փոփոխությունները:

Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն գոյություն ունեն որոշակի անցումային պարզեցումներ: Ընկերությունը կսկսի կիրառել մեկնաբանությունը գործողության մեջ մտնելու օրվանից: Քանի որ Ընկերությունը գործում է բարդ հարկային միջավայրում, մեկնաբանության կիրառումը կարող է ազդել նրա ֆինանսական հաշվետվությունների և պահանջվող ծանոթագրությունների վրա: Բացի այդ, Ընկերությունը կարող է անհրաժեշտ լինել մշակել գործընթացներ և ընթացակարգեր տեղեկատվություն ստանալու համար, որն անհրաժեշտ է մեկնաբանությունը ժամանակին կիրառելու համար:

5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

\$ՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև.

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է իրական արժեքի գնահատման մոդելներ: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում, որքան հնարավոր է, հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կստացվեր շուկայական գործարքների դեպքում (տես` Ծանոթագրություն 19):

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա: Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են Ծանոթագրություն 18-ում:

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>2017</i>	<i>2016</i>
Հաշիվներ բանկերում	40,221	24,011
Կարճաժամկետ ավանդներ բանկերում	70,236	20,027
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	110,457	44,038

7. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>2017</i>	<i>2016</i>
Ավանդներ բանկերում	106,045	50,101
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	106,045	50,101

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

8. Վաճառքի համար մատչելի ներդրումներ

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>2017</i>	<i>2016</i>
Ներդրումներ կենսաթոշակային ֆոնդերում		
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ կայուն եկամտային	38,153	74,135
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ պահպանողական	525,485	341,310
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ հավասարակշռված	42,483	77,033
	<u>606,121</u>	<u>492,478</u>
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ		

Կենսաթոշակային ֆոնդերից յուրաքանչյուր հիմնադրվել և իր առևտրային գործունեությունն է ծավալում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոններով: Ֆոնդերում ներդրումներն իրականացվում են հիմնականում երկարաժամկետ տեսլականից ելնելով և չեն ենթադրում էական մարժաներ: Ֆոնդերը ցուցակված չեն ակտիվ շուկաներում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆոնդերի համախառն զուտ ակտիվների արժեքը կազմում է 53,899,699 հազար ՀՀ դրամ, (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 32,814,132 հազար ՀՀ դրամ):

ՀՀ համապատասխան օրենսդրության համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է կատարել առնվազն 1% ներդրում յուրաքանչյուր ֆոնդում՝ որպես կառավարիչ: Այդ ներդրումները չեն կարող հետ վերադարձվել մինչև դրանց մարումը և լուծարումը: Ընկերության առավելագույն կորուստները ֆոնդերի հետ կապված արտահայտվում են ֆոնդային միավորներում կատարված ներդրումներով և ֆոնդերից պահանջների ընդհանուր գումարով:

9. Հիմնական միջոցներ

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>Վարձակալած գույքի բարելավում</i>	<i>Համակարգիչներ և գրասենյակային սարքեր</i>	<i>Փոխադրամիջոցներ</i>	<i>Գրասենյակային սարքավորում</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք					
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	27,734	589	13,523	19,250	61,096
Ավելացումներ	-	-	-	719	719
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,734	589	13,523	19,969	61,815
Ավելացումներ	-	-	-	2,548	2,548
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,734	589	13,523	22,517	64,363
Կուտակված մաշվածություն					
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	2,805	589	7,036	7,815	18,245
Տարվա ծախս	2,086	-	4,069	5,825	11,980
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,891	589	11,105	13,640	30,225
Տարվա ծախս	2,080	-	1,214	2,530	5,824
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,971	589	12,319	16,170	36,049
Հաշվեկշռային արժեք					
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,843	-	2,418	6,329	31,590
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,763	-	1,204	6,347	28,314

2017 թվականին Ընկերությունը վերանայել է իր հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը: Եթե նախկին օգտակար ծառայության ժամկետը կիրառվեր, ապա 2017թ. մաշվածության ծախսը կկազմեր 8,555 հազար ՀՀ դրամ:

10. **Հարկում**

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	(38,937)	-
Փոխանցվող հարկային վնաս	26,769	-
Հետաձգված հարկի գծով (ծախս)/փոխհատուցում	(25,885)	27,923
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	(38,053)	27,923

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016: 20%)։ ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունները մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում են ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև։ Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը։

Հաշվապահական շահույթի/(վնասի) և հարկային փոխհատուցման/(ծախսերի) միջև թվաբանական համաձայնեցումը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Շահույթ/(վնաս) նախքան հարկումը	196,242	(17,560)
Շահութահարկ 20% դրույքաչափով	(39,248)	3,512
Չվազեցվող ծախսեր	(2,826)	(3,469)
Վաճառքի համար մատչելի ներդրումների հետ կապված գործառնություններից իրացված օգուտ	3,526	-
Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթով գործառնություններից	495	(39)
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվների փոփոխություն	-	27,919
Ընդամենը շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	(38,053)	27,923

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2016	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2017
Հիմնական միջոցներ	424	(24)	400
Այլ պարտավորությունների	693	944	1,637
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	37	(36)	1
Փոխանցվող հարկային վնաս	26,769	(26,769)	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	27,923	(25,885)	2,038

Հազար ՀՀ դրամ	2015	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2016
Հիմնական միջոցներ	659	(235)	424
Այլ պարտավորությունների	-	693	693
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	37	37
Փոխանցվող հարկային վնաս	27,260	(491)	26,769
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	27,919	4	27,923
Չճանաչված զուտ հետաձգված հարկային ակտիվ	(27,919)	27,919	-
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	-	27,923	27,923

11. Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ	49,446	29,729
Այլ դեբիտորական պարտքեր	26,784	23,705
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	76,230	53,434
Կանխավճարներ	2,435	3,791
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ	1,672	1,539
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	4,107	5,330
Ընդամենը այլ ակտիվներ	80,337	58,764

12. Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Կրեդիտորական պարտքեր	33,167	26,637
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	33,167	26,637
Աշխատակիցների գծով պարտք և այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	5,520	-
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	5,520	-
	38,687	26,637

13. Սեփական կապիտալ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 800,000 հազար ՀՀ դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,500 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 320,000 դրամ անվանական արժեքով:

2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում
«ԱՄՈՒՆԴԻ-ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» բաժնետիրական ընկերություն (Ֆրանսիա)	408,000	51%
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ (Հայաստան)	392,000	49%
	800,000	100%

Վաճառքի համար մատչելի ներդրումների հետ կապված գործառնություններից չիրացված օգուտ/(վնաս)

Այս պահուստում հաշվառվում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

14. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ֆոնդերի կառավարման վճարներ	469,149	260,114
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	100,581	97,374
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	569,730	357,488

15. Անձնակազմի գծով ծախսեր

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>2017</i>	<i>2016</i>
Աշխատակիցների հատուցումներ	74,334	130,900
Անձնակազմի գծով այլ ծախսեր	4,730	10,029
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	79,064	140,929

16. Վարչական և այլ ծախսեր

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>2017</i>	<i>2016</i>
Աշխատանքի կառավարման մասնագիտական ծառայություններ	66,333	27,509
Ներդրումների կառավարման պատվիրակման գծով վճարներ	64,863	34,191
Պահառության վճար	63,758	46,398
Վարձակալության գծով ծախսեր	37,749	39,000
Ֆոնդերի կառավարչական և հաշվառման ծախսեր	25,371	19,488
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	17,037	18,701
Տեխնիկական ծրագրերի օգտագործման ծախսեր	9,723	12,692
Գործուղման ծախսեր	6,773	7,288
Մաշվածության գծով ծախսեր	5,824	11,980
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր	5,000	6,000
Հիմնական միջոցների վերանորոգման ծախսեր	4,452	4,391
Հարկեր, բացառությամբ շահութահարկի, և տուրքեր	4,339	5,767
Ներկայացուցչական և գովազդի ծախսեր	4,161	3,192
Ապահովագրության գծով ծախսեր	3,888	4,316
Այլ ծախսեր	3,936	3,766
Ընդամենը այլ ծախսեր	323,207	244,679

17. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Իրավական և հարկային միջավայր

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են սուուզման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են էական հարկային ռիսկ առաջացնել՝ ի համեմատ այլ երկրների: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվություններին համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար, Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

17. **Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)**

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Ընկերությունը որպես վարձակալ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը վարձակալում է գրասենյակային սարքավորումներ և գրասենյակային տարածք՝ գործառնական վարձակալության պայմաններով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Մինչև 1 տարի	39,885	16,474
Ընդամենը գործառնական վարձակալության գծով պարտավորություններ	39,885	16,474

18. **Գործարքներ կապակցված կողմերի հետ**

ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության մայր կազմակերպությունը «ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» բաժնետիրական ընկերությունն է (Ֆրանսիա): Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում SAS RUE LA BOETIE -ն:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:

Կապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտը և ծախսը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Մայր կազմակերպություն	Այլ կապակցված կողմեր	Մայր կազմակերպություն	Այլ կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Հունվարի 1-ի դրությամբ	–	44,038	–	95,956
Տարվա ընթացքում ստացված	–	1,301,061	–	1,336,152
Տարվա ընթացքում վճարված	–	(1,234,642)	–	(1,388,070)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	110,457	–	44,038
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	–	50,101	–	151,435
Տարվա ընթացքում ներդրված	–	472,333	–	363,595
Տարվա ընթացքում մարված	–	(416,389)	–	(464,929)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	106,045	–	50,101
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	–	9,707	–	11,632
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	100,581	–	97,374	–
Զուտ վնաս արտարժույթով գործառնություններից	(664)	(221)	(525)	(198)
Աշխատանքի կառավարման մասնագիտական ծառայություններ	(66,333)	–	(27,509)	–
Վարչական և այլ ծախսեր	(79,803)	(26,570)	(54,254)	(20,458)

18. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ներդրված ժամկետային ավանդների տոկոսադրույքը կազմել է 4.9-7.4%.

Դեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<i>2017</i>	<i>2016</i>
Աշխատավարձ և պարգևավճարներ	41,688	106,678
Այլ հատուցումներ	2,063	8,168
Ընդամենը դեկավար անձնակազմի գծով փոխհատուցումներ	43,751	114,846

19. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում իրական արժեքով չափվող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ստորև: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- ▶ Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված),
- ▶ Մակարդակ 2 – Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- ▶ Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրական արժեքով, և վերլուծում է դրանք՝ ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, որում իրական արժեքի չափումը դասակարգված է.

<i>հազար ՀՀ դրամ</i>	<i>Մակարդակ 2</i>	<i>Ընդամենը իրական արժեք</i>	<i>Ընդամենը հաշվեկշռային արժեք</i>
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	110,457	110,457	110,457
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	106,045	106,045	106,045
Այլ ֆինանսական ակտիվներ	76,230	76,230	76,230
Ֆինանսական պարտավորությունների			
Այլ ֆինանսական պարտավորությունների	33,167	33,167	33,167

19. **Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)**

<i>հազար ՀՀ դրամ</i>	<i>Մակարդակ 2</i>	<i>Ընդամենը իրական արժեք</i>	<i>Ընդամենը հաշվեկշռային արժեք</i>
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,038	44,038	44,038
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	50,101	50,101	50,101
Այլ ֆինանսական ակտիվներ	53,434	53,434	53,434
Ֆինանսական պարտավորությունների			
Այլ ֆինանսական պարտավորությունների	26,637	26,637	26,637

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է դրանց իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ տարուց ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և գեղջվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքների հետ:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

<i>հազար ՀՀ դրամ</i>	<i>Մակարդակ 2</i>	<i>Ընդամենը</i>
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Ֆինանսական ակտիվներ		
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	606,121	606,121
<i>հազար ՀՀ դրամ</i>		
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Ֆինանսական ակտիվներ		
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	492,478	492,478
<i>Վաճառքի համար մատչելի ներդրումներ</i>		

Քանի որ վաճառքի համար մատչելի ներդրումները չեն գնանշվում ակտիվ շուկաներում, իրական արժեքը որոշվում է՝ ելնելով կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքից:

20. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով:

<i>հազար ՀՀ դրամ</i>	Ցյախանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	40,221	70,236	-	110,457	-	-	110,457
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	80,925	-	25,120	106,045	-	-	106,045
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	-	-	-	606,121	606,121	606,121
Հիմնական միջոցներ	-	-	-	-	28,314	28,314	28,314
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	2,038	2,038	2,038
Այլ ակտիվներ	51,880	28,457	-	80,337	-	-	80,337
Ընդամենը ակտիվներ	173,026	98,693	25,120	296,839	636,473	636,473	933,312
Պարտավորություններ							
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	-	12,168	12,168	-	-	12,168
Այլ պարտավորություններ	16,327	19,360	3,000	38,687	-	-	38,687
Ընդամենը պարտավորություններ	16,327	19,360	15,168	50,855	-	-	50,855
Զուտ դիրք	156,699	79,333	9,952	245,984	636,473	636,473	882,457
Կուտակված ճեղքվածք	156,699	236,032	245,984		882,457		
<i>հազար ՀՀ դրամ</i>	Ցյախանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,038	-	-	44,038	-	-	44,038
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	50,101	-	50,101	-	-	50,101
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	-	-	-	492,478	492,478	492,478
Հիմնական միջոցներ	-	-	-	-	31,590	31,590	31,590
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	27,923	27,923	27,923
Այլ ակտիվներ	33,520	25,244	-	58,764	-	-	58,764
Ընդամենը ակտիվներ	77,558	75,345	-	152,903	551,991	551,991	704,894
Պարտավորություններ							
Այլ պարտավորություններ	12,284	11,353	3,000	26,637	-	-	26,637
Ընդամենը պարտավորություններ	12,284	11,353	3,000	26,637	-	-	26,637
Զուտ դիրք	65,274	63,992	(3,000)	126,266	551,991	551,991	678,257
Կուտակված ճեղքվածք	65,274	129,266	126,266		678,257		

21. Ռիսկերի կառավարում

Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է՝ հայտնաբերել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը:

Ընկերությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, գործիքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկեր: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

Վարկային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված պարտապանի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի արժեզրկված ակտիվներ:

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց՝ վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվեն այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով 2017 թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի էական արժույթային դիրքեր՝ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև սպասվող դրամական հոսքերի գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

21. **Ռիսկերի կառավարում (շարունակություն)**

հազար ՀՀ դրամ	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2017	Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2017	Արտարժույթի փոփոխություն % 2016	Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2016
Արժույթ				
Եվրո	13.7%	6,655	2.0%	135
Եվրո	-6.3%	(3,060)	-2.0%	(135)

Ստորև ներկայացված է Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	Եվրո	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	110,457	–	110,457
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	106,045	–	106,045
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	606,121	–	606,121
Այլ ֆինանսական ակտիվներ	49,446	26,784	76,230
Ընդամենը	872,069	26,784	898,853
Ֆինանսական պարտավորություններ			
Այլ ֆինանսական պարտավորությունների	11,372	21,795	33,167
Ընդամենը	11,372	21,795	33,167
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	860,697	4,989	865,686
Զուտ դիրք 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	606,673	6,741	613,414

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը: Ընկերությունը պահում է բարձր իրացվելի ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Ընկերությունը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Ընկերությունը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում նայր թվում ներքին աուդիտը:

22. Կապիտալի համարժեքություն

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է սահմանաօ պահանջներին, և որ Ընկերությունը ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը անրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Կապիտալը բաղկացած է կանոնադրական կապիտալից, վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստից և չբաշխված վնասից:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 500,000 հազար ՀՀ դրամ: 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կապիտալի չափը համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված պահանջներին: